ՏՈՂԵԿԱԳԻՐ ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ
ИЗВЕСТИЯ АРМЯНСКОГО ФИЛИАЛА АКАДЕМИИ НАУК СССР
BULLETIN of the ARMENIAN BRANCH of the ACADEMY of SCIENCES of the USSR

№ 1—2 (15—16), 1942

Ս. Հ. Թալջյան

ՀԱՅ ՆԵՏԱՁԻԳՆԵՐ

Օտար և հայ պատմիչների մոտ հայ նետաձիգների վարպետության մասին կան մի քանի արժեքավոր տեղեկություններ, որոնք ներկայացնում եմ այստեղ՝ դեպքերի ժամանակագրական կարգով։

Հռոմայեցիների դեմ Տիգրան Մեծի (Տիգրան II) մղած պատերազմների օրերին, Լուկուլլոսը, Արտաշատի վրա հարձակվելու դիտավորությամբ, իր զորքն Արածանիից անց է կացնում և կռվի բռնվում հայ զորքերի հետ։ Այս մասին Դիոն-Կասիոս հույն պատմիչը գրում է.

«Հարձակման ժամանակ թշնամու [հայերի] այրուձին խիստ նեղը գցեց հռոմեական հեծելազորին... թշնամիները որևէ ճնշում չկրեցին, այլ նրանք, նետ դառնալով՝ նետեր էին արձակում հետապնդողների վրա, և շատերին խոցեցին սպանեցին և շատերին էլ վիրավորեցին։ Իսկ վերքերը ծանր էին և դժվար էին բուժվում, որովհետև նետերն ունեին երկու ծայր, որոնք այնպես էին իրար կցված, որ թե վերքի մեջ մնալով և թե դուրս հանվելով՝ արագ կերպով մահ էին պատճառում։ Դրա պատճառն այն էր, որ նետի ծայրերից մեկը, որը ոչ մի կերպ չէր կարելի դուրս հանել՝ մնում էր մարմնի մեջ»[1]։

Ակադ. Հ. Մանանդյանը մեջ բերելով Դիոն-Կասիոսի սույն տողերը, ավելացնում է իր հետևյալ բացատրությունը. «Տիգրանի հեծելազորի փախուստը պարզապես կեղծ փախուստ էր, որի միջոցին նրա նետաձիգ արագաշարժ ձիավորները նոր ջարդ էին տալիս թշնամուն։ Կռվելու արևելյան այդ ձևը գործադրել էին, ինչպես հայտնի է, նաև պարթևները Կրասսոսի դեմ, որը կատարյալ պարտություն էր կրել 53 թվին»[2]։

Վերոհիշյալ պատերազմի պատմության համար, Չամչյանն օգտվելով դարձյալ Դիոն-Կասիոսից, ասում է.

*«Լուեալ Տիգրանայ՝ թէ առաւ Տիգրանակերտ, արձակեաց փութանակի **զհեծելազորս** իւր ի վերայ Ղուկիուղեայ. որոց ի ճանապարհի պատահեալ **հեծելոցն** հռովմայեցւոց՝ զորս յղեալ էր Ղուկիուղէս, հարին զնոսա չարաչար **յոյժ։ Իբրև** դայն լուաւ Ղուկիուղէս՝ որ հեռի էր ի տեղւոջէ անտի... առեալ **նոյն ժամայն** զվանանաւորս իւր՝ փութացաւ հասանել յօգնութիւն նոցա. իսկ **հեծելազորք** հայոց՝ փախուստ կեղծելով դարձան յետս։ Եւ ի պնդիլ Ղուկիուղեայ զկնի նոցա՝ վտանդեցան զօրք նորա առ հասարակ ի չարաչար խոցուածոց նետից հայոց»*[3]։

---

1 **Ակադ. Հ. Մանանդյան**—*Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940 թ., էջ 153։*

2 *Նույն տեղ, էջ 154։*

3 **Մ. Չամչեան**—*Պատմութիւն Հայոց, հատ. Ա., էջ 235։*

Շարունակության մեջ Զամչյանն առաջ է բերում Դիոնի խոսքերը, որոնք, սակայն, չեմ ուզում ներկայացնել այստեղ՝ կրկնությունից խուսափելու համար։

Հայ նետաձիգների մասին երկրորդ տեղեկությունն ստանում ենք Յարմուկի[1] ճակատամարտի կապակցությամբ։

Օմար խալիֆի օրերին, արաբները ոչ միայն ձգտում էին կործանել Սասանյան իշխանությունը և տիրել Պարսկաստանին, այլև նպատակ էին դրել բյուզանդացիներին քշել Սիրիայից։ Երկու բանակների միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Պաղեստինում, Յարմուկ գետի ափերին, 636 թվականին։

Այս առթիվ Ա. Վ. Աղեքսանդրյանն իր «Արևմտյան Ասիա կամ Ասիական Տաճկաստանի ժողովրդոց վրա» հոդվածում գրում է.

«[Ասորիքում] կայսերական բանակաց քանի մը պարտութիւնեն ետև՝ Յարմուքի եւօրյա ճակատամարտը Ասորիքի բաղդը որոշեց. և պարտյալ բանակին մնացորդաց հետ, հունա-հռովմեական հաջորդող Բյուզանդյանց քաղաքակրթությունը և լեզուն՝ Ամանոսի և Տավրոսի լեռներեն անդին կը մղվեր... Հայաստան՝ որ թեև դժգոհ՝ Յարմուքի ափանց վրա իր պարտքը կատարած էր, և իր գիպաձիգ աղեղնավորաց ըրած նախճրաց հիշատակը արաբացվոց քով, գործ կուրության անվանվելով՝ առակ եղած էր... չունենալով ներքին կարգավորյալ հորինվածություն մը... իր քաջերեն զրկված [էր], որոնք կայսերականաց թուլությամբը և այլոց մատնությամբը՝ Հորդանանու դաշտերուն վրա ընկեր էին (Յարմուկի ճակատամարտի մեջ)»։

Հետո, հոդվածագիրը, որպես ծանոթություն, ավելացնում է.

«Արաբացի տարեգիրք կը պատմեն, որ՝ հայ աղեղնավորներն արաբացվոց քաջերեն 700 դինվոր սպաններ էին՝ ամենն ալ աչքերնեն զարնելով, ուստի և... գործ կուրության անվանվեցավ պատերազմին այն մասը»[2] («Բազմավեպ», 1878, էջ 245)[3]։

Հայ նետաձիգների մասին վերջին տեղեկությունն ստանում ենք Հովհաննես Դրասխանակերտցի պատմագրից։

Երբ արաբացոց Բըշըր ոստիկանը պաշարում է Սեանա լիճը, որի կըղզում ապաստանել էր Աշոտ Բ. Երկաթ Բագրատունի թագավորը, վերջինս «վաղվաղակի պատրաստէ նաւս մեծասան և ամբառնայ ի նաւս անդր իբրև արս եօթնտասուն ազատս և զծառայս իւր լայնալիճ աղեղամբք՝ արս քաջակորովս և հմուտս ի ձգտումն նետաձգութեանց, որ գրեթէ ի մազոյ ոչ

---

[1] Յարմուկ գետն սկիզբ է առնում Լիբանանի լեռներից և Պաղեստինից անցնելով, Տիբերիոս լճի հարավային կողմում թափվում է Հորդանան գետը։

[2] Դժբախտաբար, հոդվածագիրն իր այս պատմածների համար ոչ մի աղբյուր ցույց չի տալիս։

[3] Սեբեոսը և Ղևոնդը հիշատակում են այս պատերազմը՝ առանց Յարմուկ գետի և այլ նետաձիգների մասին որևէ բան ասելու։ Սեբեոսը միայն Յարմուկ գետի փոխարեն հիշում է Հորդանան գետը (տես **Սեբէոս**, Երևան, 1939 թ., էջ 107—108., **Ղեւոնդ**, էջ 5—6, Ս. Պետեր.)։ Ղևոնդի Պատմության համար կազմած ծանոթագրությունների № 4-ում կարդում ենք, որ Բ. Պատկանյանը, հիմնվելով ֆրանսիացի պատմաբան Lebau-ի „Hist. de Bas-Empire" աշխատության վրա, հայտնում է, թե բյուզանդական բանակի հրամանատարը եղել է Վահան (Bahanes, Mahan) անունով մի հայ իշխան։

վրիպեին»։ Կռվի ընթացքում հայ զորքերը «զոմանս միականիս[1] ի թշնամեացն ասնէին և զայլս բազումս կարեվէր վիրաւորեալ սատակէին»։

Եթե հիշյալ կռվի մեջ թշնամիներից միայն մի քանիսը, և ոչ թե շատերը, միականի են դարձել, պատճառը, ըստ իս, կարող է լինել այն, որ հայ նետաձիգներն իրենց ոտների տակ չեն ունեցել հաստատուն գետին. նրանք կռվել են ծովի մշտաշարժ ալիքների վրա, և բնական է, որ չպիտի կարենային բոլոր նետերն էլ ուղիղ նպատակին՝ աչքերին դիպցնել։

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալ
Պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտ

С. А. Шалджян

Армянские стрелки

Резюме

В статье говорится о высоком искусстве армянских стрелков из лука. Первое известие об этом дает Дион Кассий, согласно сообщению которого стрелки из войск Тиграна II причинили римским войскам больше потерь, чем остальные роды войска. Армянские стрелки употребляли стрелы с двойным острием.

Второе известие относится к знаменитой битве при Ярмуке в 636 году. Армянские войска, находившиеся в византийской армии, своей меткой стрельбой сумели сразить только на один глаз 700 арабов.

Другое известие мы находим у армянского историка X века, католикоса Иоанна IV Драсханакертского. Он рассказывает, что группа воинов армянского царя Ашота II (Железного), сев на ладьи, отошла от острова Севан и пошла против войск арабского востикана Бшира. Войска последнего были расположены на берегу озера Севан. Историк рассказывает, что армянские стрелки метко стреляли в арабские войска и от их выстрелов многие арабские воины лишились одного глаза.

S. Shalgyan

Armenian archers

Summary

The article deals with the marksmanship of Armenian archers. The first information about it is given by Dion Cassius who states that Armenian archers from the troops of Tigran the Second armed with double pointed arrows inflicted heavy losses upon the Roman troops.

[1] Ցավի. կար.—Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 366։ Ընդգծումներն իմն են. Ս. Շ.։

The second information dates from the famous battle at Yarmook in 636. The Armenian troops that served in Byzantine army by their excellent shooting contrived to blind 700 Arabs in one eye.

The Armenian historian of X century, Catholicos Iohann the Fourth of Draskhanakert gives another information on the subject. He narrates that a group of warriors of Armenian king Ashot the Iron sailed off the Sevan Island against the troops of Arabian ostikan Beshir located on the shore of the lake. The historian proceeds that Armenian archers shot at Arabian troops from their boats and by their well aimed shooting left many of them single eyed.